Արձանագրություն N 3

«ՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հանձնաժողովի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի

ք. Կապան «26 փետրվար 2019թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝
հանձնաժողովի նախագահ՝ Ս.Աղաբեկյան
հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թումանյան,Գ.Սարգսյան,
Մ.Աբգարյան,Ն.Աթայան
հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Գրիգորյան

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և մասնակցի կողմից որակավորման փաստաթղթերի ներկայացման մասին

1. Ընդունել ի գիտություն.

- Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04. 05. 2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի պահանջները ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել ընտրված մասնակցի՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:
- ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է եզրակացություն, համաձայն որի «ՖԼԵԾ»ՍՊԸ-ն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

1.1. Ընտրված մասնակիցը սահմանված ժամկետում ներկայացրել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, որի համաձայն առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

2. Էլեկտրոնային աճուրդի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները և հայտերը գնահատել «բավարար»:.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

3. «ՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնումների կատարման նպատակով հայտարարված ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ կետը՝ «ՍՄ-ԷԱՃԱՊՁԲ-19/1» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակից է ճանաչվում «ՖԼԵԾ»ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

4. Գնման պայմանագիր կնքելու որոշման մասին

4.1.Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը և «Գնումների մասին»ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ կետը «ՖԼԵՇ»ՍՊԸ-ին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

4.2. Հիմք ընդունելով «Գնումների մասին»ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը, անգործության ժամկետ սահմանել 10 օրացույցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ :

Հանձնաժողով

Նախագահ՝ ---------- Ս.Աղաբեկյան

Անդամ՝ ---------- Ս.Թումանյան

---------- Գ.Սարգսյան

---------- Մ.Աբգարյան

---------- Ն.Աթայան

Քարտուղար՝ ---------- Ս. Գրիգորյան